ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ԼԵՎՎԵԼ ՎԱԼԵՍՅԱՆ

Սովետական Միության սոցիալ-տնտեսական զարգացման արդի փուլում վճռական նշանակություն են ձեռք բերում հասարակական արտադրության ինտենսիվ գործոնները։ Ներկայումս գիտական միտքը և պետական-կազմակերպչական միջոցառումներն ուղղված են առաջին հերթին այդ գործոնների հետագա խթանմանը, ժողովրդական տնտեսության որակական ցուցանիշների բարելավմանը, հանրային արտադրության արդյունավետության բարձրացմանը։

Նշված խնդիրների լուծումն անմիջականորեն առնչվում է այնպիսի երևույթների հետ, ինչպիսիք են հասարակության, մասնավորապես հանրային արտադրության, կառուցվածքը և ներքին համամասնությունները, երևույթներ, որոնք օբյեկտիվորեն դրսևորվում են երկու կտրվածքով՝ ճյուղային և տարածական։

Փորձենք ի մի բերել Հայկական ՍՍՀ արտադրողական ուժերի տարածական կառուցվածքի հետազոտության արդյունքները և սահմանել այն մերձավոր խնդիրները, որ կանգնած են այդ բնագավառում՝ տնտեսական աշխարհագրության և ռեգիոնալ տնտեսագիտության առաջ։

Մեր երկրի ժողովրդական տնտեսության ճյուղային կառավարման պայմաններում ավանդականորեն ելակետային նշանակություն է տրվել էկոնոմիկայի ճյուղային ուսումնասիրությանը, ճիշտ այնպես, ինչպես ժողովրդատնտեսական պլանավորման պրակտիկայում գլխավորը, առաջնայինը համարվել է ճյուղային պլանավորումը։ Ժողովրդական տնտեսության տարածական կառուցվածքի գիտական ուսումնասիրությունն ու պլանային կարգավորումը դիտվել է որպես ենթակա, ածանցյալ հարց։ Մինչդեռ ավելի ու ավելի ակնառու է դառնում, որ հանրային արտադրության արդյունավետության բարձրացման շատ արմատական հարցեր անհնար է լուծել միայն ճյուղային դիրքերից, որ անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում պահել նաև տարածքային մոտեցումը և դրանք ճիշտ ձևով զուգակցել միմյանց հետ։ Այդ ճշմարտության գիտակցումը նպաստեց Սովետական Միությունում տարածքային կոմպլեքսային հետազոտությունների աշխուժացմանը, և 1940—50-ական թվականներին ձևավորվեց տարածքային-արտադրական համալիրների մասին հայտնի տեսությունը[1]*, որը և՛ մեզանում, և՛ արտասահմանում գնահատվեց որպես տնտեսա-աշխարհագրական գիտության XX դ. խոշորագույն նվա-*

[1] Н. Н. Колосовский, Производственно-территориальное сочетание (комплекс) в советской экономической географии («Вопросы географии», М., 1947, № 6); Ю. Г. Саушкин, Экономическая география: история, методы, практика, М., 1973.

ճում։ Այդ տեսության էությունը համառոտակի և սխեմատիկ ձևով հանգում է նրան, որ որոշակի տարածքում, բնական, ժողովրդագրական և տնտեսական որոշակի պայմաններում օբյեկտիվորեն ձևավորվում է արտադրողական ուժերի մի զուգորդություն, տնտեսության ճյուղերի ու տարածքային մասերի փոխպայմանավորված մի ամբողջություն, որտեղ գործում է սիներգիզմի երևույթը, այսինքն՝ ճյուղերի, ինչպես նաև տարածքային բաղադրիչների ռացիոնալ փոխազդեցության ու փոխադարձ կապերի հետևանքով ստացված էֆեկտը լինում է ավելին, քան առանձին միավորների էֆեկտների գումարն է։

Նշենք, որ արդեն 1960-ական թվականների վերջին գիտական այս կոնցեպցիան ստացավ նաև պաշտոնական ճանաչում և ներկայումս լայնորեն կիրառվում է Սովետական Միության պետական պլանավորման պրակտիկայում։ Դրա վկայությունն է ՍՄԿԿ XXIV և XXV համագումարների որոշումներին համապատասխան տարածքային զարգացման նպատակային ծրագրերի մշակումը և դրա հիման վրա միութենական նշանակության տարածքային-արտադրական համալիրների ստեղծումը Սիբիրի, Ղազախստանի, Միջին Ասիայի և ՍՍՀՄ եվրոպական տարածքի մի շարք շրջաններում։

Տարածքային-արտադրական համալիրների կոնցեպցիան ավելի լայն ու բազմակողմանի կիրառություն է գտնում ՍՍՀՄ սոցիալ-տնտեսական զարգացման ներկայումս մշակվող հեռանկարային պլանների ու կոմպլեքս ծրագրերի մեջ։

Մեր հանրապետության պայմաններում տնտեսության տարածական կառուցվածքը թերագնահատելու տրամադրություններին սնունդ է տվել նաև նրա տարածքի փոքրության և սկզբնական շրջանում հետամնաց ու պարզունակ ժողովրդական տնտեսություն ունենալու հանգամանքը։ Այն սխալ կարծիքն է տիրապետել, որ մեր փոքր տարածքում կոմպլեքսային լուծում պահանջող տարածքային լուրջ պրոբլեմներ ծագել չեն կարող։ Սակայն կյանքը ցույց տվեց, որ մեզանում ևս արտադրության գիտականորեն հիմնավորված տարածքային կազմակերպումը նույնպիսի արմատական, անընդհատ լուծում պահանջող խնդիր է, ինչպես ճյուղային կառուցվածքի կատարելագործումը։ Մի քանի տարի առաջ հանրապետության պետպլանի կազմում ստեղծվեց տարածքային պլանավորման բաժին, տնտեսագիտական նախապլանային մշակումների մեջ երևան եկան ինչպես ամբողջ հանրապետության, այնպես էլ նրա առանձին մասերի կոմպլեքսային զարգացմանը նվիրված թեմաներ։ Այնուամենայնիվ, ո՛չ գիտական հետազոտություններում, ո՛չ էլ պլանավորման պրակտիկայում ժողովրդական տնտեսության տարածքային կառուցվածքի հետ կապված արմատական հարցերն իրենց պատշաճ տեղը չեն գրավել, թեև ակնհայտ է, որ այստեղ թաքնված են հասարակական արտադրության արդյունավետությունը բարձրացնելու, հասարակական կյանքը ճիշտ կազմակերպելու էական ռեզերվներ[2]։

Միաժամանակ շատ որոշակի է, որ հին տեսական դրույթներով և ավանդական նկարագրական մեթոդներով անհնար է կատարել արտադրության տարածական կառուցվածքի արդիական հետազոտություն և ակնկալել կոնստրուկտիվ արդյունքներ։

---

[2] Ա. Ռ. Բաղդասարյան, Հ. Կ. Գաբրիելյան, Լ. Հ. Վալեսյան, Աշխարհագրություն («Գիտությունը Հայաստանում 50 տարում», Երևան, 1973)։

Հասարակական այդ բազմաշերտ և բարդ երևույթի արդյունավետ ուսումնասիրության համար ամբողջովին նոր հեռանկարներ և հնարավորություններ բացեց տարածքային-արտադրական համալիրների մասին տեսությունը։ Այն նոր լույս սփռեց տարածքով փոքրիկ, բայց բնական և տնտեսական պայմանների մեծ բազմազանություն ունեցող մեր հանրապետության արտադրողական ուժերի տարածքային կառուցվածքի խորքային պրոցեսների վրա, բանալի տվեց նրանց մեխանիզմը հասկանալու և կարգավորելու համար։ Այդ տեսությունը հնարավորություն տվեց նաև նոր զննակետից դիտելու և գնահատելու Հայաստանի տնտեսական զարգացման անցած ուղին։

Հայաստանի ժողովրդական տնտեսության տարածական ամորֆ-կոնգլոմերատային վիճակից կառուցվածքային վիճակի անցնելու առաջին էական նախադրյալները ստեղծվեցին Թիֆլիս—Ալեքսանդրապոլ (Լենինական)—Երևան—Ջուլֆա երկաթուղու կառուցման շնորհիվ՝ XX դ. սկզբին միայն։ Ճիշտ է, ցարական կառավարության այդ միջոցառումը հետապնդում էր ռազմաստրատեգիական նպատակ, բայց որպես երկրորդային հետևանք այն նպաստեց երկրամասի տնտեսական զարգացմանը և աշխատանքի հասարակական տարածքային բաժանմանը։ Սակայն ցարական կառավարության ազգային քաղաքականությունը և դրա ոգուց բխող Անդրկովկասի վարչատարածքային բաժանումը չէին նպաստում Անդրկովկասի ժողովուրդների ազգային էկոնոմիկաների ստեղծմանը։ Աշխատանքի տարածքային բաժանման օբյեկտիվ և առաջադիմական պրոցեսը ոչ թե հանգեցնում էր ազգային տարածքների տնտեսական համախմբմանը, այլ ուժեղացնում էր նրանց տրոհվածությունը։ Հայերով բնակեցված տարածքը բաժանված էր 4 վարչատարածքային միավորների միջև։ Հայկական ՍՍՀ ներկայիս սահմաններում գտնվող Զանգեզուրը և հյուսիս-արևելյան շրջանները պատկանում էին Ելիզավետպոլի նահանգին, Դեբեդ գետի ավազանի մեծ մասը (Բորչալուի գավառ)՝ Թիֆլիսի նահանգին, հյուսիս-արևմտյան ոչ ընդարձակ հատվածը՝ Կարսի մարզին, մնացած տարածքը՝ Երևանի նահանգին։ Այդ տարածքներից յուրաքանչյուրը հարում էր «իր» կենտրոնին։ Այլ կերպ ասած, Հայկական ՍՍՀ ներկայիս փոքրիկ տարածքը թե՛ վարչակառավարչական և թե՛ տնտեսական-առևտրական առումով տրոհված էր 4 «ազդեցության գոտիների» միջև։ Ըստ որում, այդ գոտիներից երկուսի կենտրոնները՝ Թիֆլիսը և Ելիզավետպոլը, գտնվում էին թվարկված տարածքներից դուրս, նրանցից բավականին հեռու։ Այդ տրոհված տարածքի տարբեր մասերի միջև շատ թե քիչ էական տնտեսական, առավել ևս արտադրական կապերը բացակայում էին, չհաշված պղնձի արտադրության գծով Զանգեզուրի և Ալավերդու միջև 1916 թ. հաստատված կապը, որը, սակայն, շուտով ընդհատվեց։

Սովետական Հայաստանի կազմավորումից հետո աշխատանքի հասարակական բաժանման պրոցեսը, որը տեղի էր ունենում արտադրողական ուժերի շատ արագ աճի հիման վրա, հանգեցրեց տրամագծորեն հակառակ արդյունքի՝ Հայկական ՍՍՀ միասնական, այսպես ասած, ազգային տնտեսության ստեղծմանը։ Այդ բանը ակնառու կերպով դրսևորվեց նյութական արտադրության թե՛ ճյուղային և թե՛ տարածքային կտրվածքում։

Նախ ճյուղային կառուցվածքում կատարված տեղաշարժերի մասին։

1913 թ. դրությամբ ցենզային արդյունաբերությունը ներկայացված էր մոտավորապես մեկ տասնյակ արտադրություններով, որոնցից հանքարդյու-

նաբերությանը (պղնձի հանքաքար), պղնձաձուլությանը, գինու-կոնյակի, մրգի պահածոների, կաշվի և կոշիկի արտադրությանը բաժին էր ընկնում արդյունաբերության համախառն արտադրանքի 84%-ը։ Մնացածը տալիս էին մետաղամշակումը, փայտամշակումը, բրնձամաքրման ու գարեջրի ձեռնարկությունները և ձկան որսը[3]։ Միջճյուղային և ներճյուղային հնարավոր շատ կապեր բացակայում էին, մյուսները գտնվում էին զարգացման ծայրաստիճան ցածր մակարդակի վրա։ 1928 թ. վիճակով, երբ ավարտվեց հանրապետության ժողովրդական տնտեսության վերականգնումը, և այն քանակական հիմնական ցուցանիշներով հասավ նախապատերազմյան մակարդակին, արդյունաբերության ճյուղային կառուցվածքը հարստացել էր նոր ճյուղերով ու արտադրություններով, որոնք ներճյուղային և միջճյուղային նոր էական կապերի հիմքը դրին (հիդրոէլեկտրաէներգետիկա, քիմիական, շինանյութերի, տեքստիլ արդյունաբերություն)։ Ավելի ուշ, հանրապետության ինդուստրացման, ինչպես և հետագա տարիների ընթացքում արտադրողական ուժերի կոմպլեքսային զարգացման տենդենցը դրսևորվեց նոր ուժով, որը և, ի վերջո, հանգեցրեց արմատական կառուցվածքային փոփոխությունների։

Հայկական ՍՍՀ արդյունաբերությունը, որը, ինչպես հայտնի է, այժմ իր համախառն արտադրանքը 1913 թ. համեմատությամբ ավելացրել է ավելի քան 330 անգամ, համախմբում է շուրջ 600 հիմնական արդյունաբերական ձեռնարկություններ, այդ թվում՝ ավելի քան 7 տասնյակ արտադրական և գիտաարտադրական միավորումներ[4]։ Արդյունաբերության մեջ արտադրական միավորների թիվը, օժանդակ ձեռնարկությունների հետ մեկտեղ, հասնում է 3000-ի։ Արդյունաբերության ճյուղային կառուցվածքն ունի հետևյալ պատկերը՝ 15 խոշոր (ագրեգացված) ճյուղ (ՍՍՀՄ-ում ի մի վերցրած՝ 16), 80 միատարր ճյուղ (ՍՍՀՄ ընդհանուր թվի 56%-ը) և նույնքան էլ ենթաճյուղ և արտադրություն (ՍՍՀՄ ընդհանուր թվի գրեթե 53%-ը), որոնք թողարկում են մի քանի տասնյակ հազար անուն արտադրատեսակ։

Նման բազմապրոֆիլ բնագավառ է նաև գյուղատնտեսությունը, որտեղ հաշվվում է առ 1/I 1978 թ. 429 սովխոզ, 317 կոլտնտեսություն և 50 միջտնտեսային ձեռնարկություն և միավորում։ Հանրապետության փոքր տարածքում մշակում են պետականորեն գրանցված 26 անուն գյուղատնտեսական կուլտուրա՝ ՍՍՀՄ ընդարձակ տարածքում մշակվող 35-ի դիմաց (74,3%-ը)[5]։

Հայկական ՍՍՀ նյութական արտադրության նման բազմաճյուղ բնույթը ձևավորվել է պատմականորեն, բնական ու տնտեսական պայմանների բազմազանության շնորհիվ։ Այլ հարց է, թե այդ բազմաճյուղայնությունն ինչքանով է նպատակահարմար ու պատճառաբանված։ Բայց բոլոր դեպքերում այն օբյեկտիվորեն նպաստավոր պայմաններ է ստեղծում արտադրական կապերի զարգացման ու տնտեսության կոմպլեքսայնության մակարդակի բարձրացման, ամբողջ տնտեսության հետագա ինտեգրացման համար։

Նույնպիսի ուղղվածություն ունեն արտադրողական ուժերի տարածքային կառուցվածքի մեջ կատարված տեղաշարժերը ևս։

---

3 «Հայկական ՍՍՀ աշխարհագրական ատլաս», Մոսկվա, 1976, էջ 25։

4 «Народное хозяйство Армянской ССР в 1977 г.», Ереван, 1978, էջ 45։

5 Արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքին վերաբերող թվերը հաշվարկված են ՍՍՀՄ և Հայկական ՍՍՀ վիճակագրական տարեգրքերի հիման վրա։

Նախասովետական ժամանակաշրջանում Հայկական ՍՍՀ ներկայիս տարածքում հաշվվում էր ընդամենը 4 քաղաքային բնակավայր՝ Երևանը, Ալեքսանդրապոլը, Նոր Բայազետը (Կամո) և Գորիսը, որտեղ բնակվում էր ընդամենը 104 հազ. մարդ՝ ամբողջ բնակչության 10%-ը։ Ներկայումս քաղաքային բնակավայրերի թիվը 57-ն է, որից 21-ը հանրապետական ենթակայության քաղաքներ են։ 1979 թ. հունվարի 17-ի մարդահամարի տվյալներով՝ հանրապետության քաղաքային բնակչության թիվը սրընթաց տեմպերով ավելացել է, հասնելով շուրջ 2 մլն-ի՝ կազմելով բնակչության ընդհանուր թվի 66%-ը։

Գյուղական բնակչությունը՝ ավելի քան 1 մլն., բաշխված է շուրջ 930 գյուղական բնակավայրերում։

Քննվող հարցի առումով ամենաէական որակական տեղաշարժը պետք է համարել այն, որ նախկինում իրարից անկախ, դիսկրետ բաշխում ունեցող բնակելի կետերի փոխարեն ներկայումս Հայկական ՍՍՀ սահմաններում ձևավորվել է բնակավայրերի մի միասնական ցանց, որն աստիճանաբար ձեռք է բերում տարաբնակեցման ամբողջական համակարգի որակ։

Հայկական ՍՍՀ տարաբնակեցման համակարգի ձևավորման համար վճռական նշանակություն ունեցան հանրապետության ինդուստրացման և ուրբանիզացման բարձր տեմպերը և այդ ֆոնի վրա արդյունաբերության տարածքային կառուցվածքի ձևավորումը։

Նախասովետական Հայաստանի ցենզային արդյունաբերությունը բաշխված էր ընդամենը 8 կետում, որոնցից առաջինը Ալավերդին էր։ Նրան բաժին էր ընկնում արդյունաբերության համախառն արտադրանքի 36,4%-ը։ Երկրորդ տեղում Երևանն էր՝ 34,8%։ Դրանց հաջորդում էին Ղափանը՝ 22,2%, Ղամարլուն (Արտաշատ)՝ 2%, Դիլիջանը՝ 2%, Ալեքսանդրապոլը՝ 1,6%, Նոր-Բայազետը՝ 0,5% և Մեղրին՝ 0,5%[6]։

Ներկայումս հիմնական արդյունաբերական ձեռնարկությունները (առանց օժանդակների և կոլտնտեսային-սովխոզայինի) տեղաբաշխված են շուրջ 140 կետերում ու կենտրոններում, որոնց մեծ մասը գտնվում են տնտեսական և արտադրական բավական սերտ փոխադարձ կապերի մեջ։ Զարգացման որոշակի մակարդակի են հասել նաև այդ արդյունաբերական բնակավայրերի և հարակից գյուղատնտեսական շրջանների տնտեսական կապերը։

Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության տարածական կառուցվածքի ձևավորման համար սկզբունքային նշանակություն ունեցավ տրանսպորտային միասնական ցանցի, միասնական հայկական էներգասիստեմի, ինչպես նաև գազամուղների միասնական ցանցի ստեղծումը։ Այժմ քաղաքային և գյուղական գրեթե բոլոր բնակավայրերը հանրապետության տնտեսական գլխավոր կենտրոնների հետ կապված են երկաթուղային կամ ավտոմոբիլային ճանապարհներով, էլեկտրահաղորդման բարձր լարման գծերով միացած են էներգասիստեմին։ Նրանց զգալի մասը, որտեղ բնակվում է հանրապետության բնակչության շուրջ 80%-ը, միավորված է գազամուղների ցանցի մեջ։

Նշված և բազմաթիվ այլ փաստեր վկայում են այն մասին, որ Սովետական Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացումը տարածական տեղաշարժերի առումով ոչ այլ ինչ է, քան շրջանային մասնագիտացման անընդհատ զարգացման ու կատարելագործման հետ մեկտեղ ինտեգրացիոն պրոցեսների

---

[6] «Հայկական ՍՍՌ ատլաս», Երևան—Մոսկվա, 1961, էջ 72։

անընդհատ խորացում, տնտեսական-արտադրական ոչ միայն ուղղաձիգ, այլև հորիզոնական նոր կապերի հաստատում ու զարգացում, հանրապետության տարածքի արտադրական համախմբում, տնտեսական համակենտրոնացում։ Այս բոլորն ի մի բերած, մեր կարծիքով, բավարար ապացույցներ են այն բանի, որ Հայկական ՍՍՀ սահմաններում օբյեկտիվորեն ձևավորվել և զարգանում է միութենական նշանակության մեկ միասնական ժողովրդատնտեսական օրգանիզմ՝ ՍՍՀՄ հզոր ժողովրդատնտեսական համալիրի բաղկացուցիչ մասը։ Այն, ինչպես ասվեց վերևում, հասարակության տարածական կառուցվածքի ամբողջովին նոր որակ է, նրա տարածքային կազմակերպման նոր մակարդակ։ Հենց սա էլ պետք է համարել հանրապետության արտադրողական ուժերի զարգացման տնտեսա-աշխարհագրական ամենակարևոր արդյունքը, իսկ այդ երևույթի բացահայտումը՝ հանրային արտադրության տարածական կառուցվածքի գիտական հետազոտությունների գլխավոր արդյունքը, սկզբունքային հետևությունը։

Այդ իրողության ընդունումը մեզ ստիպում է վերանայել հանրապետության կոմպլեքսային զարգացման ու արտադրական մասնագիտացման, ճյուղային ու տարածքային համամասնությունների հաստատման, բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման, բնակչության ու հասարակական արտադրության, սոցիալական և արտադրական ինֆրակառուցվածքի տեղաբաշխման շատ հարցերի մասին մեր պատկերացումները, նորովի գնահատել ժողովրդատնտեսական պրոբլեմների գիտական ապահովման վիճակը և նոր մոտեցում մշակել դեպի դրանց ուսումնասիրությունը։

Գործնական-կազմակերպչական բնույթի հարցերի շարքում քննվող պրոբլեմի հետ առավել սերտ կերպով է կապվում և առավել նշանակալիցն է տարածքային պլանավորման կատարելագործումը։ Տարածքային պլանավորման նպատակը և ուղղակի ֆունկցիան ժողովրդական տնտեսության տարածքային կազմակերպումն է, արտադրողական ուժերի տարածքային կառուցվածքի կատարելագործումն ու ռացիոնալացումը։

Եթե հարցը կոնկրետացնենք միութենական հանրապետությունների նկատմամբ, ապա լայն առումով տարածքային պլանավորումը գիտատնտեսական, վիճակագրական-տնտեսագիտական մշակումների և վարչակազմակերպչական միջոցառումների մի սիստեմ է, որն ընդգրկում է. ա) հանրապետական ենթակայության տնտեսության պլանները, բ) ճյուղային պլանների տարածքային կտրվածքը, գ) բուն տարածքային պլանները, որոնք կոմպլեքսային բնույթ ունեն և ընդգրկում են հանրապետությունների տարածքում եղած ամբողջ տնտեսությունը՝ անկախ ենթակայությունից[8]։

Ակնհայտ է, որ ժողովրդական տնտեսության տարածքային կառուցվածքի արմատական հարցերը կարող են լուծվել կոմպլեքսային տարածքային պլանի միջոցով։ Սակայն հայտնի է, որ այդպիսիք ըստ էության չեն մշակվում։ Հանրապետությունների սոցիալ-տնտեսական զարգացման տարեկան, հնգամյա և հեռանկարային պլանները շատ հաճախ ոչ այլ ինչ են, քան ճյուղային պլանների հիմնական ցուցանիշների մեխանիկական գումարը։ Բայց եթե նախկի-

---

[7] Л. А. Вэлесян, Производственно-территориальныи комплекс Армянской ССР, Ереван, 1970

[8] В. Ф. Павленко, Территориальное планирование в СССР, М., 1975, էջ 42։

նում հանրապետության տնտեսության փոքր հզորության ու համեմատական պարզության պայմաններում այդպիսի մոտեցումը կարող էր համարվել բավարար, ապա ներկայումս այն անկարող է ապահովել ժողովրդական տնտեսության տարածքային կառուցվածքի կատարելագործումն ու ռացիոնալ տարածքային համամասնությունների հաստատումը։ Իսկ դրանք պրոբլեմներ են, որոնք ժողովրդական տնտեսության կառավարման ներկայիս ճյուղային սկզբունքի պայմաններում ավելի են սրվում և անհետաձգելի լուծում են պահանջում։ Այս փաստի համընդհանուր գիտակցումն էլ հենց պայման է այն բանի, որպեսզի կոմպլեքսային տարածքային պլանավորման նշանակության աճի ներկայիս նշմարվող միտումն ապագայում է՛լ ավելի ծավալվի ու խորանա[9]։ Ի միջի այլոց նշենք, որ ՍՍՀՄ արևելյան շրջաններում նոր ստեղծվող տարածքային-արտադրական համալիրներն արդեն դիտվում են որպես պլանավորման օբյեկտներ։ Արդեն կուտակված է նրանց տեխնիկատնտեսական հիմնավորման և նախապլանային մշակումների հարուստ փորձ, ստեղծված է տեսական ու մեթոդական հարուստ գրականություն։ Այդ տեսակետից մեծ արժեք են ներկայացնում հատկապես ՍՍՀՄ ԳԱ Սիբիրի բաժանմունքի արդյունաբերական արտադրության էկոնոմիկայի և կազմակերպման ինստիտուտի հետազոտությունները (Ա. Աղանբեգյանի, Ա. Գրանբերգի, Մ. Բանգմանի և այլոց ղեկավարությամբ), որտեղ առանձնահատուկ տեղ են գրավում տարածքային-արտադրական համալիրների ու նրանց ձևավորման մոդելավորման հարցերը[10]։

Ինչ վերաբերում է արդեն յուրացված և զարգացած տնտեսություն ունեցող շրջաններում ձևավորվող համալիրներին, ապա, ինչպես ասվեց, նրանց համակարգային ուսումնասիրությունները նոր միայն ծավալվում են։ Մեր հանրապետության համար վերը շարադրված արդյունքները կարող ենք համարել տարածքային-արտադրական համալիրի հետազոտության սկզբնական փուլ։

Ընդունելով Հայկական ՍՍՀ միասնական տարածքային-արտադրական համալիրի օբյեկտիվ գոյությունը, տնտեսա-աշխարհագրական ու ռեգիոնալ տնտեսագիտական հետազոտությունները պետք է հենվեն նաև այդ համալիրի՝ որպես կառավարվող համակարգի գործունեության անընդհատ բարելավման ու կատարելագործման հասարակական անհրաժեշտության վրա։ Խոսքն այդ գործունեության ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական և էկոլոգիական արդյունավետության բարձրացման մասին է։ Ըստ որում, եթե ռեգիոնալ տնտեսագիտական հետազոտությունները շեշտը դնում են տնտեսական արդյունավետության, մասամբ էլ սոցիալական արդյունքի վրա, ապա տնտեսա-աշխարհագրական հետազոտություններն իրենց ուշադրության կենտրոնում ունենալով պրոբլեմի էկոլոգիական, մասամբ նաև սոցիալական ասպեկտները, միաժամանակ կարող են ապահովել ուսումնասիրությունների կոմպլեքսայնությունը, բացահայտել պրոբլեմի տարբեր ասպեկտների փոխազդե-

---

[9] Л. А. Валесян, Союзная республика в системе территориального планирования СССР («Географические проблемы регионального развития и государственное планирование», Тбилиси, 1978).

[10] «Моделирование формирования территориально-производственных комплексов», Новосибирск, 1976.

ցությունը։ Ահա այստեղ է, որ հատկապես օգտակար պետք է լինեն համակարգային վերլուծության ու մոդելավորման մեթոդները և էլեկտրոնային հաշվիչ տեխնիկայի լայն կիրառությունը։ Դրա շնորհիվ է, որ կարող են ճշգրիտ տարբերակային լուծումներ առաջարկվել այնպիսի հարցերի համար, ինչպիսիք են հանրապետության արտադրական համալիրի ճյուղային ու տարածքային կառուցվածքը, մասնագիտացումն ու կոմպլեքսայնությունը, բնակչության ու արտադրության համակենտրոնացումը, ներքին ու արտաքին տնտեսական-արտադրական կապերը, աշխատանքի միութենական ու միջազգային բաժանման համակարգում հանրապետության տեղը, տարբեր ռեգիոնների բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումն ու բնական միջավայրի պահպանությունը և այլն։

Ճիշտ են այն կարծիքները, որ տարածական երևույթների ընդհանուր օրինաչափությունները կարելի է բացահայտել ընդարձակ տարածությունների հետազոտության շնորհիվ։ Բայց և կասկածից վեր է, որ նման շատ երևույթների խորքային պրոցեսների ճանաչումն անհնար է առանց սահմանափակ տարածքներում ավելի խոր, մանրամասն ու բազմակողմանի հետազոտությունների։ Քննության առարկա մեր նյութը պատկանում է երկրորդ դեպքին, ուստի և նրա հետազոտությունը պետք է գնա «ըստ խորության», դեպի միասնական տնտեսական օրգանիզմի կառուցվածքային մասերն ու ֆունկցիոնալ բաղադրիչները, նրանց կառուցվածքի, ներքին ու արտաքին կապերի վերլուծությունն ու գնահատումը։

Հայտնի է, որ արտադրության ճյուղերի պաշտոնական դասակարգումը, ինչպես և ընդհանրապես ամեն մի դասակարգում, տառապում է որոշակի պայմանականությամբ, միշտ չէ, որ ճիշտ է արտացոլում ժողովրդական տնտեսության իրական կառուցվածքը և չի կարող կիրառելի լինել տարածքային-արտադրական համալիրների տեսության համար։ Ընդունված է այդ համալիրների ֆունկցիոնալ բաղադրիչներ համարել որևէ կոնկրետ բնական նյութի արդյունահանման և մշակման հաջորդական արտադրական ստադիաների միասնությունը, որը հայտնի է էներդա-արտադրական ցիկլ (կամ շղթա) անունով։ Ելակետային դրույթն այն է, որ ամեն մի տարածքային արտադրական համալիր բաղկացած է փոխկապակցված ու փոխպայմանավորված այդպիսի ցիկլերից։ Հետևապես, այդ համալիրի ներքին հագեցվածության, կոմպլեքսայնության և մասնագիտացման մակարդակը բնութագրվում է ոչ միայն այդ ցիկլերի քանակով և միջցիկլային կապերով, այլև յուրաքանչյուր ցիկլի ավարտվածության աստիճանով։ Ի վերջո, ցիկլի ավարտվածության աստիճանով է որոշվում, թե տնտեսական շրջանառության մեջ ընդգրկված տվյալ բնական նյութն ի՞նչ արտադրական ստադիաներ է անցնում, ֆիզիկական և քիմիական ինչպիսի՞ վերափոխումների է ենթարկվում, ի՞նչ չափով է դառնում սպառարժեք կամ արտադրական թափոն և ի՞նչ վիճակով է վերադառնում բնություն, ազդելով նրա որակի վրա։ Ասվածից տրամաբանորեն հետևում է, որ ռեսուրսային ցիկլերի մեթոդը նոր հնարավորություններ է բացում տարբեր բնական ռեսուրսների անմնացորդ օգտագործման հիմնարար պրոբլեմի ուսումնասիրման և լուծման համար։ Դա նշանակում է, որ ռեսուրսային ցիկլերի հետագա զարգացումն ու կատարելագործումը կարող է հանդես գալ որպես նպատակային ծրագրավորման օբյեկտ և իր պատշաճ տե-

դը գրավել ոչ միայն նախապլանային մշակումների, այլև ժողովրդատնտեսական պլանների մեջ[11]։

Տարածքային-արտադրական համալիրի հետազոտությունն ըստ բաղադրիչների ունի մի այլ կտրվածք ևս։ Եթե այդ համալիրը դիտում ենք որպես մի դերհամակարգ, ապա նրանում առանձնանում են այնպիսի հարաբերականորեն ինքնուրույն համակարգեր, ինչպիսիք են արտադրության (արդյունաբերության, գյուղատնտեսության), տարաբնակեցման, տրանսպորտային և այլ տարածքային համակարգեր, որոնցից յուրաքանչյուրը ենթակա է կարգավորման և կարող է ծառայել որպես հետազոտության ինքնուրույն օբյեկտ՝ իր յուրահատուկ բովանդակությամբ ու առանձնահատկություններով։

Մեզանում որոշակի արդյունքներ կան հիշյալ համակարգերի ուսումնասիրության բնագավառում ևս։ Օրինակ, արդյունաբերության տարածական կառուցվածքի համար առավել հատկանշականը առ այսօր պետք է համարել արդյունաբերական հանգույցների ձևավորումը։ Դրանք հանդիսանում են արդյունաբերության տարածքային կազմակերպման ավելի առաջադիմական, արդիական ձև։ Ելակետ ունենալով ձեռք բերված մակարդակը և զարգացման տենդենցները, Հայկական ՍՍՀ-ում առանձնացվել են արդեն ձևավորված կամ ակտիվ ձևավորման պրոցեսում գտնվող 6 արդյունաբերական հանգույցներ՝ Երևանի, Լենինականի, Կիրովականի, Ալավերդու, Սևան—Հրազդանի և Ղափանի։ Ուրվագծված են նաև այն շրջանները, որոնք այդպիսի հանգույցների ձևավորման առավել մեծ պոտենցիալ ունեն. դրանք են՝ Որոտանի միջին ավազանը (հիդրոէլեկտրակայանների կասկադի, առկա արտադրական ինֆրակառուցվածքի և հանքային ռեսուրսների շնորհիվ) և Աղստևի միջին ավազանը (զարգացած ինֆրակառուցվածքի, հանքային ու գյուղատնտեսական ռեսուրսների և հարմարավետ աշխարհագրական-տրանսպորտային դիրքի շնորհիվ)։

Արդյունաբերական հանգույցների գերադաս զարգացմանը զուգընթաց շարունակվում է արդյունաբերական առանձին, «մեկուսացված» կետերի ու կենտրոնների հիմնադրման ու զարգացման պրոցեսը։ Այդ երկու երևույթներն ըստ էության լրացնում են իրար, ամբողջացնում արդյունաբերության տարածքային կառուցվածքը, բայց և առանձին կոնկրետ դեպքերում կարող են մտնել հակասության մեջ։ Այդ երևույթների հավասարակշռումը, արդյունաբերության գիտականորեն հիմնավորված տարածքային կազմակերպումը և, դրա շնորհիվ, տարածքային անհամամասնությունների վերացումն էլ հենց պետք է համարել գիտության ու պրակտիկայի հիմնարար հարցերից մեկը։ Կամ, գյուղատնտեսության օրինակը. այդ ճյուղի արդյունավետության հետագա բարձրացումը միջտնտեսային կոոպերացիայի և ագրոարդյունաբերական ինտեգրացիայի, քիմիացման և մեքենայացման բազայի վրա, գյուղատնտեսական բնական ռեսուրսների ճիշտ գնահատման և ռացիոնալ օգտագործման անհրաժեշտությունը նոր պահանջներ են առաջադրում նրա տարածքային կազմակերպմանը։ Նոր հնչեղություն է ստանում գյուղատնտեսական արտադրության և գյուղատնտեսական ռեսուրսների շրջանացումը, որ պետք է

---

[11] И. В. Комар, Рациональное использование природных ресурсов и ресурсные циклы, М., 1975; Л. А. Валесян, Ресурсные циклы и некоторые вопросы исследования экономических аспектов природопользования, («Охрана окружающей природной среды. Материалы советско-американского симпозиума», М., 1978).

հատուկ հետազոտությունների նյութ դառնա և լայնորեն օգտագործվի հեռանկարային պլանավորման պրակտիկայում։

Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության գոտիների դեռևս 1950-ական թվականների կեսերին ընդունված սխեման նյութական արտադրության այդ կարևոր ճյուղի տարածքային կազմակերպման այսօրվա պահանջներին չի բավարարում։ Այն չի համապատասխանում նաև գիտության արդի մակարդակին և չի կարող փոխարինել ո՛չ բուն գյուղատնտեսության և ո՛չ էլ գյուղատնտեսության բնական ռեսուրսների շրջանացմանը։

Լուրջ պրոբլեմ է նաև ի մի վերցրած ամբողջ նյութական արտադրության տարածքային կառուցվածքի կատարելագործումը։ Սրա համար ելակետ պետք է հանդիսանա ոչ թե ճյուղային (արդյունաբերական, գյուղատնտեսական և այլն), այլ ինտեգրալ, համատնտեսական շրջանացումը։ Այդ ուղղությամբ կատարված գիտական հետազոտությունների դրական արդյունքներն ակնհայտ են։ Հանրապետությունում ստեղծվել է այդ պրոբլեմի ուսումնասիրության որոշակի ավանդույթ, ըստ որում 1950-ական թվականներից սկսած շրջանացման աշխատանքներում կիրառվել են նաև էներգա-արտադրական ցիկլերի մեթոդը և տարածքային-արտադրական համալիրների մասին տեսությունը[12]։ Այդ աշխատանքների տրամաբանական ավարտը հանդիսացավ Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի «Հայկական ՍՍՀ սոցիալ-տնտեսական շրջանացման մասին» 1977 թ. հունվարի 4-ի որոշումը։ Դրանով իսկ հանրապետությունն առաջին անգամ ունեցավ իր պաշտոնական, բոլոր մինիստրությունների ու գերատեսչությունների համար պարտադիր սոցիալ-տնտեսական շրջանացում, որը համահնչուն է տարածքային-արտադրական համալիրների կոնցեպցիային. առանձնացված յուրաքանչյուր շրջան դիտվում է որպես հանրապետության միասնական համալիրի կառուցվածքային, ֆունկցիոնալ բաղադրամաս, միաժամանակ լինելով ավելի ցածր դասի տարածքային-արտադրական համալիր, թեև հաստատված կոնկրետ սխեման որոշ մասնավոր հարցերում ճշտման ու կատարելագործման կարիք ունի և կյանքի նոր պահանջներին համապատասխան պետք է բարեփոխվի։

Արտադրության տարածական կառուցվածքի հետագա ուսումնասիրությունը գլխավորապես պետք է ընթանա տնտեսական շրջանների մասնագիտացման, կոմպլեքսային զարգացման, բնական և աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման, նրանց սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների համահարթման, միջշրջանային և ներշրջանային արտադրական կապերի կատարելագործման և նման բնույթի այլ հարցերի ուղղությամբ։ Դրանք նպատակ ունեն վերացնել տարածական անհամամասնություններ, խթանել ետ մնացող, հատկապես ծայրամասային և բարձր լեռնային տարածքների զարգացումը և մեծացնել յուրաքանչյուր տնտեսական շրջանի ավանդը հանրապետության տնտեսական պոտենցիալի հզորացման գործում։

Արտադրողական ուժերի տարածքային կառուցվածքի ուսումնասիրության և կատարելագործման բնագավառում իբրև ինքնուրույն պրոբլեմ է հանդես գալիս արտադրության տարածքային բազիսի՝ բուն տարածքի, ինչպես

[12] Հանրապետության համատնտեսական շրջանացման պատմության մասին տե՛ս Ա. Բ. Բաղդասարյան, Հ. Կ. Գարրիելյան, Լ. Հ. Վալեսյան, նշվ. աշխ., Ս. Մ. Դուլյան, Լ. Հ. Վալեսյան, Հայկական ՍՍՀ տնտեսական աշխարհագրության ակնարկ, Երևան, 1967։

նաև որպես արտադրամիջոց ծառայող բնական ռեսուրսների գնահատումը։ Սա առաջնակարգ նշանակություն է ձեռք բերում հատկապես մեր հանրապետության համար, որի մակերևույթի լեռնային բնույթը, բարձրադիր ու խիստ մասնատված տեղամասերի, մեծ թեքություն ունեցող լանջերի և երկրագործության համար ոչ պիտանի ընդարձակ տարածությունների առկայությունն ավելի են սրում արտադրության և ամբողջ հասարակության տարածքային բագիսի սահմանափակության և նրա ճիշտ, նպատակասլաց ու խնայողական օգտագործման պրոբլեմը։

Ժողովրդական տնտեսության տարածքային կառուցվածքի կազմում ուսումնասիրության ինքնուրույն բնագավառ են նաև բնակչության և բնակավայրերի տեղաբաշխումը և տարածքային կազմակերպումը, այլ կերպ ասած՝ տարաբնակեցումը[13]։ Հարցի ուսումնասիրվածության արդի մակարդակը հնարավորություն է տալիս գոնե մոտավոր կարգով ուրվագծելու տարաբնակեցման համակարգի տարածքային կառուցվածքը։ Այդ համակարգի կմախքը կազմում է ստորադասության սկզբունքով կազմակերպված քաղաքային բնակավայրերի բաղմամակարդակ ցանցը։ Բնակավայրերի ցանցի յուրաքանչյուր մակարդակի համապատասխանում է քաղաքների որոշակի դաս՝ իրեն հատուկ տարածքային կազմակերպիչ կորիզի պոտենցիալով և ֆունկցիաներով[14]։ Այդ դասերն են. առաջին, ամբողջ հանրապետության տարաբնակեցման համակարգի կենտրոնը՝ Երևանը։ Երկրորդ, տարաբնակեցման ռեգիոնալ համակարգերի կենտրոնները՝ Լենինականը, Կիրովականը, նույն ինքը՝ Երևանը, ինչպես նաև միջշրջանային նշանակություն ունեցող մի քանի այլ քաղաքներ։ Երրորդ, տարաբնակեցման լոկալ համակարգերի կենտրոնները։ Դրանք վարչական շրջանի կենտրոն հանդիսացող բնակավայրերն են։ Չորրորդ, բնակավայրերի փոքր՝ տեղական նշանակություն ունեցող խմբերի (ենթաշրջանների) կենտրոններ։

Այժմ բավականին հստակ պատկերացում է մշակված տարաբնակեցման միասնական համակարգի և մյուս հասարակական տարածական համակարգերի փոխազդեցությունների ու փոխադարձ կապերի մասին, բացահայտված են դրանց ընդհանուր օրինաչափությունները, որոնք, սակայն, կախված կոնկրետ պայմաններից, ունեն իրենց մոդիֆիկացիաները[15]։

Ավարտելով հարցի քննությունը, ընդգծենք, որ գիտական իմացության մեթոդոլոգիական վերազինման արդի փուլում գիտությունն ավելի որոշակիորեն է կողմնորոշվում դեպի կառավարման պրոբլեմները։ Այդ պայմաններում աննախադեպ նշանակություն է ձեռք բերում համակարգային մոտեցումը, որը նոր հնարավորություններ է ընձեռում արտահայտված ինտեգրատիվ օբյեկտ-

---

[13] В. В. Покшишевский, Население и география. Теоретические очерки, М., 1978.

[14] Л. А. Валесян, Л. А. Давтян, О районообразующей роли городов Армянской ССР («Материалы всесоюзной научной конференции по проблемам народонаселения Закавказья», Ереван, 1968).

[15] Ուղղակիորեն տարաբնակեցման հարցերը շոշափող աշխատություններից են, օրինակ՝ С. М. Дульян, Некоторые географические особенности в размещении городского населения в Армянской ССР («Известия АН Армянской ССР, Науки о земле», 1971, № 3); Р. М. Овесян, Ереванская агломерация и ее проблемы («Плановое хозяйство», 1974, № 10); Х. А. Аветисян, Взаимосвязь между рельефом и расселением населения («Известия АН Армянской ССР, Науки о земле», 1978, № 4).

ների՝ լինեն դրանք բնական, տեխնոգեն, թե սոցիալ-տնտեսական, և նրանց բազմապիսի կապերի՝ ոչ միայն պատճառահետևանքային, այլև ավելի բարդ ու խոր՝ ֆունկցիոնալ կոոպերացիոն, զարգացման կապերի հետազոտության համար։

Ժողովրդական տնտեսության տարածքային կառուցվածքի և նրա ֆունկցիոնալ բաղադրիչների պլանային կարգավորումն ու կառավարումը պատկանում են հենց այն պրոբլեմների թվին, որոնք լուծման գիտական ապահովման առավել արդյունավետ ուղին համանարգային ուսումնասիրություններն են։

ТЕРРИТОРИАЛЬНАЯ СТРУКТУРА ПРОИЗВОДИТЕЛЬНЫХ СИЛ АРМЯНСКОЙ ССР

ЛЕМВЕЛ ВАЛЕСЯН

Резюме

В связи с повышением на современном этапе общественного развития значения интенсивных факторов становится необходимым более углубленное исследование социально-экономических явлений пространственно-структурного характера. В этой области новые возможности открывает учение о территориально-производственных комплексах (ТПК).

Главными итогами исследований в свете этого учения являются: установление в пределах республики единого ТПК союзного значения — составной части народнохозяйственного комплекса СССР, возникшего объективно в результате сложного взаимодействия местных и внешних (общесоюзных) экономических условий, под воздействием экономических законов социализма; выявление основных структурных единиц республиканского ТПК-производственно-отраслевых и территориальных.

Наиболее важные экономико-географические проблемы в области научной территориальной организации производства Армянской ССР — следующие: исследование вопросов рационального природопользования методом ресурсных циклов; повышение эффективности всего ТПК; научное обеспечение управления такими пространственными системами, как промышленность, сельское хозяйство, расселение населения. Для решения этих проблем помимо углубления соответствующих научных исследований следует резко повысить значение территориального планирования и усовершенствовать его методы.